

## **ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

*Ներկայացվում է «ՕքսեՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին*

### **Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՕքսեՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

### **Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարոխության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



**Թաթուլ Մովսիսյան**

Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

27 հունիսի, 2024թ.,

ք.Երևան, Պ.Սևակի 8



**«ՕքսիՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ  
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

<i>Միլիոն դրամ</i>	<i>Ծանոթ.</i>	<i>31/12/23</i>	<i>31/12/22</i>
<b>Ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	6	47,979	55,809
Ոչ նյութական ակտիվներ		273	331
Հետաձգված հարկային ակտիվներ	21	1,498	720
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>49,750</b>	<b>56,860</b>
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	7	14,914	6,147
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային ակտիվ		386	228
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	14	1,110	958
Ֆինանսական ներդրում	9	43,342	-
Դրամական միջոցներ	10	238,228	336,007
Այլ ընթացիկ ակտիվներ		-	50
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		<b>297,980</b>	<b>343,390</b>
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>347,730</b>	<b>400,250</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
Հիմնադիրների ներդրումներ	11	5	5
Կուտակված շահույթ (չծածկված վնաս)	11	(6,042)	(8,272)
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>(6,037)</b>	<b>(8,267)</b>
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	48,252	56,140
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>48,252</b>	<b>56,140</b>
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	13	449	5,496
Աշխատավարձի և այլ կարճ. հատուց-ի գծով պարտ-թյուններ	15	9,986	5,119
Եկամուտներին վերաբերող շնորհներ	16	295,079	341,762
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>305,515</b>	<b>352,377</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>347,730</b>	<b>400,250</b>

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Մարգարիտա Հակոբյան

Վիկտորյա Միրզախանյան



**«ՕքսԵՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ**  
**Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**  
**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

<i>Միլիոն դրամ</i>	<b>Ծանոթ.</b>	<b>2023</b>	<b>2022</b>
Ծառայությունների մատուցումից հասույթ	17	-	4,480
Ծառայությունների մատուցման ինքնարժեք	17	-	(4,480)
Դրամաշնորհներից եկամուտ	18	324,266	304,529
Դրամաշնորհների գծով ծախսեր	18	(324,266)	(304,529)
Այլ ծախսեր/եկամուտներ	19	(5,585)	(3,631)
<b>Գործառնական շահույթ (վնաս)</b>		<b>(5,585)</b>	<b>(3,631)</b>
Ֆինանսական եկամուտներ	20	3,730	4,726
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		3,381	(8,449)
<b>Շահույթ (վնաս) մինչև հարկումը</b>		<b>1,526</b>	<b>(7,354)</b>
Շահութահարկի գծով ծախս	21	704	(343)
<b>Զուտ շահույթ (վնաս)</b>		<b>2,230</b>	<b>(7,697)</b>

Գործադիր տնօրեն

Սարգսիսա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

Վիկտորյա Միրզախանյան



**«ՕքսիՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ  
Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

‘000 դրամ

	<b>Ծանոթ.</b>	<b>Հիմնադիրների ներդրումներ</b>	<b>Կուտակված շահույթ (չծածկված վնաս)</b>	<b>Ընդամենը</b>
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.</b>	11	5	(576)	(571)
Զուտ շահույթ (վնաս)		-	(7,697)	(7,697)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.</b>		5	(8,272)	(8,267)
Զուտ շահույթ (վնաս)		-	2,230	2,230
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>		5	(6,042)	(6,037)

Գործադիր տնօրեն

Մարգարիտա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

Վիկտորյա Միրզախանյան



**«ՕքսիՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ  
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն  
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Միլիոն դրամ

	<b>2023</b>	<b>2022</b>
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Դրամաշնորհներից	246,740	457,631
Վաճառքներից	-	4,480
այլ մուտքեր	253	8
տրամադրված դրամաշնորհներ	(79,697)	(66,888)
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(84,804)	(135,030)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(155,349)	(85,302)
այլ դրամաշնորհային ծրագրերի համար վճարումից	(2,893)	(1,148)
<b>Գործառնական գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>(75,750)</b>	<b>173,751</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>		
հիմնական միջոցների վաճառքից	-	900
հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(479)	(1,528)
բանկային ավանդի ներդրումից	(40,000)	-
բանկային ավանդի մարումից	-	80,000
տոկոսների ստացումից	388	7,501
<b>Ներդրումային գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>(40,091)</b>	<b>86,873</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական գուտ հոսքեր</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր</b>	<b>115,840</b>	<b>260,624</b>
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	18,061	(8,449)
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի</b>	<b>336,007</b>	<b>83,832</b>
<b>Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի</b>	<b>238,228</b>	<b>336,007</b>

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Մարգարիտա Հակոբյան

Վիկտորյա Միրզախանյան

